

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 11-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը: Մասնակցում էին նաև Հայաստանի Հանրապետության վարչապետ Անգրանիկ Մարգարյանը, Հայ առաքելական եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդ Նավասարդ սրբազանը, նախարարներ, տարրեր դերատեսչութ-յունների և ակադեմիական համակարգի ներկայացուցիչներ: Ներկաները մեկ րոպե լուսթյամբ հարգեցին կյանքից հեռացած զրականագետ, ակա-դեմիկոս Հրանտ Թամրադյանի հիշատակը:

Ժողովը ներածական խոսքով բացեց ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադե-միկոս Ֆ. Տ. Սարգսյանը: Այսօր, ամփոփելով ՀՀ գիտությունների աղբա-յին ակադեմիայի հաշվետու տարվա գործունեության արդյունքները, պետք է նշել, որ ակադեմիայի համակարգը, չնայած շարունակվող նյու-թական ծանր պայմաններին, դիտական հետադոտությունների ասպարե-զում հասել է զրական որոշ տեղաշարժերի, ասաց նա: Գիտնականների ջանքերը նպատակաուղղված են եղել հստակ ուղղված գիտության զար-գացման այն հիմնական ուղղությունները, որոնք բխում են հանրապե-տության տնտեսական զարգացման անմիջական շահերից և գիտության հետազա զարգացման հնարավորություններից: Մեր առջև ծառացած հիմ-նական խնդիր եղել է դիտական ներուժի և կոլեկտիվների ձեռքբերումնե-րի պահպանումը: ԳԱԱ-ի ինստիտուտների կողմից մշակված նոր տեխնո-լոգիաները հնարավորություններ են ստեղծում թողարկել արդյունաբերա-կան և գյուղատնտեսական որոշ ապրանքներ, որոնք կարող են մրցունակ լինել համաշխարհային շուկայում: Մշակված են տեխնոլոգիաներ, որոնք ստացել են ներգրման լիցենզիաներ: Սակայն ցավով պետք է նշել, շարու-նակեց ԳԱԱ պրեզիդենտը, որ, ինչպես նախկինում, այսօր էլ մեր գիտնա-կանների մշակումները դեռևս շատ քիչ կիրառում են գտնում մեղ մոտ: Մենք շատ լավ ենք հասկանում, որ արդյունաբերության, գյուղատնտե-սության, սոցիալական ոլորտի վերականգնմանը և զարգացմանը զուգըն-թաց կաճի նաև պահանջը դեպի գիտությունն ու գիտական ներգրումնե-րը:

ՀՀ ԳԱԱ պրեզիդենտը նշեց, որ գիտական ներուժը թույլ է տալիս հստակ նախանշել գիտության զարգացման հիմնական ուղղությունները: Կասկած չկա, որ առաջիկայում հանրապետության համար առաջնահերթ պետք է համարվեն մեր երկրի պաշտպանության խնդիրների, բարձր տեխ-նոլոգիաների, էներգիայի և վառելիքի նոր աղբյուրների, հանքահումքա-յին պաշարների հետազոտման աշխատանքները և այս ուղղությունների զարգացման հենքի վրա նոր աշխատանքների ստեղծման, նոր նյութերի, շրջակա միջավայրի պահպանման, կենսատեխնոլոգիայի, հայագիտության

և հասարակական մյուս գիտությունների ուղղությամբ տարվող հետազոտությունների առաջնությունը:

Գիտության արգյունավետ զարգացումը, ինչպես և ամեն մի մտավոր ստեղծագործական պրոցես պահանջում է այդ զարգացմանը նպաստող սլայմաններ, նյութական ապահովվածություն և պետական հովանավորություն, շարունակեց Ֆ. Սարգսյանը: Գիտությունը չի կարելի վարչական սկզբունքներով կառավարել: Վարչական լծակները պետք է ի սպաս դնել գիտության առջև կանգնած խնդիրների լուծման, գիտության հովանավորման և խրախուսման համար: Այդպես է վիճակը բոլոր քաղաքակիրթ երկրներում: Հարկ է մեկ անգամ ևս ընդգծել, որ, ցավոք, մեր երկրում գիտության հեղինակությունը չի գտնվում արժանավայել հարգանքի բարձրության վրա, չնայած ունենք պատկառելի գիտական ներուժ:

Մենք համոզմունք ենք հայտնում, ասաց Ֆ. Սարգսյանը, որ մեր պետությունը նոր հարյուրամյակում նորովի կմոտենա հանրապետության գիտության զարգացման խնդիրներին: Արդեն արվել է մի կարևոր քայլ. ընդունվել է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» բազմաչարչար օրենքը: Ըստ երևույթին, կարելի է ասել, որ մեր բարձրացրած բոլոր սկզբունքային հարցերն իրենց լուծումն են գտել այդ օրենքում:

Չնայած 1999–2000 թթ. շարունակվող աշխատանքային ծանր պայմաններին, ՀՀ ԳԱԱ-ի գիտնականները մեծ ջանքեր են գործադրել սլանավորված գիտահետազոտական աշխատանքները կատարելու համար: Բազմաթիվ հայտնագործությունները, գյուտերը, պարգևները, կոչումները, միջազգային գիտաժողովները, գիտական հրավերներն ու գործուղումները արտասահման վկայում են, որ մեր գիտնականները կարողացել են պահպանել գիտական բարձր մակարդակը անգամ այսօրվա գժվարին պայմաններում:

2000թ. հաջողվել է կնքել համատեղ գիտական գործունեության պայմանագրեր արտասահմանյան գիտական մի շարք հայտնի կազմակերպությունների հետ: Արտասահմանյան կազմակերպությունների, բարերարների միջոցով լուծվել են ՀՀ ԳԱԱ-ի համակարգի առջև ծառայած մի շարք հրատապ խնդիրներ, որոնք անհրաժեշտ են ակադեմիայի գործունեության համար: Սակայն հասկանալի է, որ այս ամենը բավարար չի կարող համարվել, որովհետև միջազգային գրանտները և պայմանագրերը հասանելի են սահմանափակ թվով գիտական ուղղությունների, գիտնականների և չեն լուծում մեր գիտական հանրության աշխատանքի պայմանների և վարձատրման հարցերը: Բավական է նշել, որ 1999 թ. հոկտեմբերի 1-ից սկսած ԳԱԱ ինստիտուտները նախատեսված շատ կարևոր հատկացումներ չեն ստացել: Չնայած այս ընթացքում առանձին հովանավորների օգնությամբ հաջողվել է տպագրել 40 գիրք և նախատեսված ամսագրերի մեծ մասը, սակայն շատ աշխատություններ ֆինանսավորման պակասի պատճառով մնացել են հրատարակչությունում:

Խիստ անհրաժեշտ է, շարունակեց Ֆ. Սարգսյանը, որ գործի ՀՀ վարչապետին առընթեր գիտության և գիտատեխնիկական քաղաքակա-

նության խորհրդի աշխատանքը: Խորհուրդը, ամփոփելով համապատասխան նախարարությունների և ԳԱԱ-ի կողմից ներկայացված դիտությունների գարդացման առաջնային ուղղությունների վերաբերյալ առաջարկությունները, կկարողանա տալ հանձնարարականներ՝ ֆինանսների բազային և նպատակային տեղադրման վերաբերյալ:

Այնուհետև ՀՀ ԳԱԱ պրեզիդենտն անդրադարձավ միջազգային և մի շարք գոնոր կազմակերպությունների աջակցությանը, որը հնարավորություն է ընձեռեց լուծելու ոչ քիչ թվով լուրջ, ֆինանսական ներդրումներ պահանջող հարցեր: Նա անգնահատելի համարեց Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի կողմից ԳԱԱ-ին ցուցաբերվող նպատակային օժանդակությունն ու աջակցությունը: Ձի կարելի մեկ անգամ ևս չնշել հիմնադրամի հայկական բաժանմունքի տնօրեն Զավեն Եկավյանի և հոգաբարձու Միքայել Եսայանի հայրենանպաստ մեծ աշխատանքը: Հաշվետու տարվա ամենաձանր օրերին հիմնադրամն օգնեց լուծելու գրքերի և ամսագրերի հրատարակման, գիտնականների, մանավանդ, երիտասարդ մասնագետների օժանդակության հետ կապված մի շարք հրատապ հարցեր:

Կցանկանալի առանձնահատուկ նշել, ասաց Ֆ. Սարգսյանը, Հայաստանում դիտությունների գարդացման նպատակին ուղղված Հայ օգնությունների ֆոնդի շնորհակալ գործունեությունը: Արդեն երկրորդ տարին է, ինչ այս հիմնադրամը կազմակերպում է մրցանակաբաշխություն՝ լավագույն գիտական աշխատանքների ֆինանսավորման նպատակով: 2000 թ. ներկայացված 87 գիտական թեմաներից 5000-ական գույարի դրամաշնորհներ շահեցին 22 աշխատանքներ 1999 թ. 5 աշխատանքի գիմաց, որոնցից 11-ը ներկայացված էին ՀՀ ԳԱԱ-ի դիտաշխատողների կողմից:

Վերջում ՀՀ ԳԱԱ պրեզիդենտն ասաց, որ դիտությունների մասին ընդունված օրենքի դերն ու նշանակությունը չափազանց մեծ է, բայց այն հանրօգուտ արդյունք կտա, եթե կարողանանք հարկ եզածի պես օգտվել օրենքի ընձեռած հնարավորություններից:

«Հայաստանի Հանրապետության դիտությունների ազգային ակադեմիայի 2000թ. դիտական և դիտակազմակերպական գործունեությունների հիմնական արդյունքները» զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Վ. Բ. Բարխուդարյանը: Հաշվետու տարվա ՀՀ ԳԱԱ գործունեության արդյունքների ամփոփումը հավաստում է այն իրողությունը, որ թեպետև շարունակվել են ֆինանսական դժվարությունները, այդուհանդերձ, ՀՀ ԳԱԱ-ն լարված աշխատել է և հաջողություններ ունի ինչպես հիմնարար, այնպես էլ կիրառական դիտությունների բնագավառներում, ասաց նա: Հաշվետու տարում դիտական հետազոտություններ են կատարվել պետբյուջեից ֆինանսավորվող 471 թեմաներով: Հրատարակվել է շուրջ 90 աշխատություն, 1155 գիտական հոդված՝ հանրապետությունում և 867 հոդված՝ արտասահմանում: Այնուհետև Վ. Բարխուդարյանը հանգամանորեն անդրադարձավ ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական դիտությունների, բնական դիտությունների, հումանիտար դիտությունների բաժանմունքների 2000թ. ձեռք բերած գիտական հիմնական արդյունքներին ու նվաճումներին:

Հաշվետու տարում կայացել է ԳԱԱ 2 ընդհանուր ժողով: Զեկուցողն անդրադարձավ ընդհանուր ժողովներում արծարծված հարցերին, նշեց, որ դեկտեմբերի 8-ի ընդհանուր ժողովում տեղի ունեցան ԳԱԱ թղթակից անդամների, արտասահմանյան և պատվավոր անդամների ընտրություններ: Ակադեմիայի նախագահությունն անցկացրել է 29 նիստ, որտեղ քննարկվել է մոտ 100 հարց: 2000թ. նոյեմբերի 8-ին, ասաց Վ. Բարխուդարյանը, կայացավ ԳԱԱ նախագահության ընդլայնված նիստ, որին մասնակցեց ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանը: Քննարկվեցին ակադեմիայի, ինչպես նաև ընդհանրապես դիտություն համար արդիական նշանակություն ունեցող հարցեր, ինչպիսիք են «Գիտական և դիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի ընդունման կարևորությունը, հանրապետությունում դիտության զարգացման հեռանկարները, դիտության ֆինանսավորման և կառավարման հիմնախնդիրները:

Նախագահության նիստերում քննարկվել են այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են Սևանա լճի էկոլոգիական իրավիճակի և նրա բարելավման ուղիների, գիտական տեղեկատվության ուղղված տարվող աշխատանքների բարելավման միջոցառումների, Հայաստանում ՄԳՏԿ-ի գործունեության, ՀՀ ձեռնարկությունները քվարցային ավազով բավարարելու, Հայաստանում սննդային սնկերի մեքանիզմների արտադրություն կազմակերպելու, անտառաշինական աշխատանքների արդյունքների մասին և այլն:

Հաշվետու տարում անց է կացվել ԳԱԱ նախագահության բյուրոյի 41 նիստ, որտեղ քննարկվել են կազմակերպական, ֆինանսատնտեսական և այլ բնույթի հարցեր:

Խոսելով ԳԱԱ միջազգային գիտական կապերի հետագա զարգացման մասին, զեկուցողն ասաց, որ 2000թ. ընթացքում արտասահմանյան 35 երկրներ են գործուղվել ԳԱԱ 276 դիտականներ. գործուղումներն իրականացվել են հրավիրող կողմի և տարբեր հիմնադրամների ֆինանսավորմամբ: Ակադեմիան մեծ ուշադրություն է հատկացրել միջազգային դոնոր կազմակերպությունների և հիմնադրամների հետ աշխատանքների կազմակերպմանը, դրանց կողմից առաջարկվող գիտահետազոտական ծրագրերի մասին տեղեկատվության տարածմանը ակադեմիայի համակարգում: Հաշվետու տարում ակադեմիայի 15 ինստիտուտներ աշխատանքներ են կատարել ավելի քան 40 դրամաշնորհների գծով: ԳԱԱ ինստիտուտներում 23 արտասահմանյան երկրներից ընդունվել է 315 գիտնական:

Չպետք է կարծել, որ միջազգային կապերի ասպարեզում ամեն ինչ պատշաճ մակարդակի վրա է և չկան թերացումներ: Հիմնական թերությունն այն է, որ տակավին հաղթահարված չէ միջազգային տարաբնույթ ու բազմաքանակ հիմնադրամներից գրանտներ ստանալու պասսիվությունը: Ինստիտուտների մի մասի, դիտության առանձին ներկայացուցիչների կողմից չկա աշխույժ հետաքրքրություն, միջազգային հիմնադրամների մրցույթներին ակտիվորեն մասնակցելու ձգտում:

Փորձը ցույց տվեց, շարունակեց զեկուցողը, որ ճիշտ չէր ժամանակին (1996) ԳԱԱ կազմում թղթակից անդամի կարգավիճակի վերացումը: Ընդհանուր ժողովի առաջարկով և կառավարության 2000թ. ապրիլի 4-ի

որոշմամբ վերականգնվեց ակադեմիայի երկաստիճան համակարգը: Դեկտեմբերի 8-ին կայացած ՀՀ ԳԱԱ թղթակից անդամների ընտրություններին տարբեր մասնագիտությունների գծով հայտարարված 24 տեղերի համար առաջագրվել էին 178 գիտնական, որոնցից ընտրվեց 21 թղթակից անդամ:

2001թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԳԱԱ կազմում ընդգրկված են 103 ակադեմիկոս և 21 թղթակից անդամ:

Հաշվետու տարվա սկզբում ասպիրանտուրայում սովորում էին 215 երիտասարդ, այդ թվում՝ 83-ը՝ արտագրությունից չկտրված: 2000թ. ասպիրանտուրայում սովորում էին 200 երիտասարդ, 124-ը՝ արտագրությունից կտրված, 76-ը՝ արտագրությունից չկտրված:

Զեկուցողն այնուհետև անդրադարձավ ակադեմիայի համակարգում դործող 32 գրադարաններին, «Գիտություն» հրատարակչությունը: Հրատարակչությունն իր եկամուտների միջոցով հրատարակել է 40 դիրք, նախատեսված 47 անուն ամսագրերից հրատարակվել է 27-ը:

Ակադեմիայի համակարգում գործող աստիճաններ շնորհող դիտական խորհուրդներում սլաշտպանվել են 24 դոկտորական և 70 թեկնածուական, իսկ ԳԱԱ աշխատակիցների կողմից՝ 9 դոկտորական և 24 թեկնածուական ատենախոսություններ:

ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտը անդրադարձավ մի կարևոր խնդրի ևս: Ավելորդ է արձանագրել այն իրողությունը, ասաց նա, որ մինչ այժմ հստակ ու որոշակի չեն սահմանվել հանրապետության տնտեսության զարգացման գերակա ճյուղերը և դրա հետ կապված հիմնարար գիտությունից զարգացման առաջնահերթ ուղղությունները: Անորոշ են մնում կառավարության կողմից ակադեմիային ներկայացվող առաջադրանքները, հրատապ լուծում պահանջող խնդիրները: Դրա հիմնական պատճառն այն է, որ հանրապետության բարձրագույն ատյաններում գոյություն չունի գիտությունը համակարգող որևէ օղակ: Կարծում ենք, հանրապետության վարչապետի գլխավորությամբ ստեղծված, առայժմ միայն անվանապես գոյություն ունեցող, գիտական և գիտատեխնիկական խորհուրդն է կոչված հանրապետությունում գիտական քաղաքականություն մշակող բարձրագույն կենտրոն լինելու:

Անցումային շրջանի շուրջ տաս տարվա փորձը թելադրում է, վերջում ասաց Վ. Բարխուդարյանը, որ ժամանակն է, հիմք դարձնելով գիտության մասին օրենքը, վերակառուցել մեր աշխատանքներն այն մտայնությամբ, որպեսզի պահպանելով հայոց գիտության բարձր վարկանիշը՝ այն առավել արդյունավետ ծառայեցնենք հանրապետության սոցիալտնտեսական և գիտամշակութային կյանքի զարգացման պահանջներին:

Հայ առաքելական եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդ Նավասարդ սրբազանը ժողովի մասնակիցներին հղեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսի և իր ողջունը, արգասավոր աշխատանք մաղթեց ժողովին ու հաջողություններ հայոց կաճառին՝ ի փառս հայ գիտության և Հայաստան աշխարհին:

Հաշվետու զեկուցման շուրջ ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն, որին մասնակցեցին ակադեմիկոս Վ. Հակոբյանը, գիտություն

յունների դոկտոր Բ. Ղարիբջանյանը, պրոֆեսոր Ա. Գևորգյանը, ակադեմիկոս Կ. Ղարաբաղյանը, գիտությունների դոկտոր Հր. Ավագյանը, ակադեմիկոս Գ. Ավագյանը և երիտասարդ գիտաշխատողների համաակադեմիական խորհրդի նախագահ Գ. Ավետիսյանը: Նրանք մեկ անգամ ևս շեշտեցին, որ առանց գիտություն ժողովուրդը, երկիրը, պետությունն ապագա չունեն: Այլընտրանք չունեցող այս ճշմարտությունը չգիտակցել, նշանակում է չհոգալ և չմտածել ազգի գոյատևման ու դարգացման մասին: Ասկայն վերջին տարիներին հայ գիտությունը գրեթե անտեսվեց և մանավանդ զրկվեց պետական հովանավորությունից: Համառ ջանքերով ակադեմիայի ղեկավարությունը հաջողվել է պահպանել համակարգն ու գիտական ներուժը: Ասկայն այսպես շարունակվելու դեպքում հայ գիտությունը սպառնում է կործանում: Այսօր հրամայական պահանջ է անսահման հոգ տանել հայ գիտական ներուժի պահպանման և գիտությունը զարգացման համար: Նշվեց, որ ԳԱԱ-ի և Հանրապետության գիտական բոլոր կազմակերպությունների համար հաշվետու տարում նշանավոր իրադարձություն էր «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը, որը հույս է ներշնչում, թե գիտությունն նկատմամբ ձեռավորվում է նոր վերարժեքում, որ վերջապես լուրջ քայլեր կձեռնարկվեն հայ գիտական ներուժի պահպանման, գիտության հեղինակության բարձրացման, պետական հովանավորության և աջակցության ապահովման համար:

Ելույթ ունեցողներն անդրադարձան թեմատիկ ֆինանսավորման անտրամաբանական էությունը, գիտությունը հատկացվող ֆինանսական սուղ միջոցներին, ամիսներով ձգձգվող աշխատավարձին, գիտաշխատողների նյութական անմխիթար պայմաններին:

Հայաստանի Հանրապետության վարչապետ Անդրանիկ Մարգարյանն իր ելույթում բարձր գնահատեց գիտությունների ազգային ակադեմիայի գործունեությունը, ասելով, որ ակադեմիայի «միջոցով մեր ազգի պատիվը բարձր է պահվում ողջ աշխարհում», արժանին մատուցեց հայ գիտնականների ձեռքբերումներին, կարևորեց ակադեմիայի ու հայ գիտությունը գերը անկախ պետականության կայացման գործում: «Մենք պարտավոր ենք համապատասխան պայմաններ ստեղծել Ձեր գործունեության համար, գուք էլ պետք է նեցուկ կանգնեք կառավարությանը», - վերջում ասաց վարչապետը:

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը քննարկեց ՀՀ ԳԱԱ կանոնադրության և ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպության օրինակելի կանոնադրության նախագծերը: Դրանք ընդունվեցին որպես հիմք հետագա վերամշակման և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնելու համար:

ՀՀ ԳԱԱ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 10-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ հումանիտար բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովը: Բաժանմունքի ընդհանուր ժողովին

մասնակցում էին ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Տ. Սարգսյանը, բաժանմունքին առընթեր գիտական խորհուրդների անդամները, բաժանմունքի ինստիտուտների աշխատակիցներ:

«Բաժանմունքի 2000թ. դիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները» զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանը: Հանգամանորեն անգրագառնալով բաժանմունքի 2000թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքներին, զեկուցողը թվարկեց բաժանմունքի գիտական հիմնարկների ձեռքբերումները, նշեց այդ հիմնարկների առջև դրված խնդիրները, տեղ գտած թերությունները:

Զեկուցումից հետո Գ. Ա. Բրուտյանը պատասխանեց հարցերին: Այնուհետև բաժանմունքի 2000թ. գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվության քննարկմանը մասնակցեցին ակադեմիկոսներ Հ. Ա. Ավետիսյանը, Վ. Ե. Խոջաբեկյանը, Գ. Ա. Գալոյանը, Գ. Ե. Ավադյանը, Երկ. հանք. դ. դ. Հ. Ս. Ավագյանը: Հիմնականում նշվեց, որ դիտությունը կարիք ունի պետական հովանավորության: Թեև դիտությունն արտադրողական ուժ է, բայց այժմ ոչ բոլոր բնագավառներում է հնարավոր այն իրականացնել: Հայագիտությունը, ինչպես նաև տեսական այլ գիտություններ կարող են զարգանալ և արտասահմանյան մրցակցությունը դիմանալ և անգամ պահպանել իրենց առաջատար դերը, եթե պետական մարմինները նեցուկ դառնան այդ գիտություններին, ինչպես անմիջական, այնպես էլ միջնորդավորված ձևով: Բավարար չէ թեմատիկ ֆինանսավորման եղանակը: Այն չի ապահովում ֆինանսավորվող աշխատությունների հրատարակումը, ինչը ի չիք է դարձնում ներդրված առանց այն էլ սուղ միջոցները: Անհրաժեշտ է գիտահետադոտական թեման ֆինանսավորելիս նախատեսել նաև դիրքը հրատարակելու, անհրաժեշտության դեպքում՝ նաև արտասահմանյան գործուղումների ծախսերը: Մտահոգիչ հարց է նաև այն, որ թեև ասպիրանտական հայտերը ՀՀ ԳԱԱ ինստիտուտները ներկայացնում են ընդունելության քննություններից շատ ամիսներ առաջ, բայց տեղերը, այն էլ չնչին քանակությամբ, ՀՀ կառավարությունից ստացվում են քննություններից 1-2 շաբաթ առաջ:

Բաժանմունքի 2000թ. գիտական և գիտակազմակերպման գործունեության հիմնական արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը հաստատվեց, իսկ բաժանմունքի 2000թ. դիտական և գիտակազմակերպական գործունեությունը համարվեց դրական:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ